

# Խաչակիրներու առաջին արշաւանքները Կիլիկիոյ մէջ եւ Եդեսիոյ լատին կոմսութեան հիմնադրութիւնը

ԵՐՈՒԱՆԻ Հ. ՔԱՍՈՒՆԻ

Առաջին խաչակրութեան ընթացքին, Եդեսիոյ մէջ, Պոլտուինի (Պաղտին) կողմէ լատին իշխանապետութեան մը հիմնադրութիւնը, ու այդ ալ Երուսաղէմի ազատագրութեան համար պատերազմելէ առաջ (1099 թ.ի Յուլիսի 15), առանձին ուշադրութեան արժանի պարագայ մըն է, նկատի առած անոր ունեցած անմիջական ազդերսը հայ ժողովուրդին հետ: Տակաւին՝ Եդեսիոյ մէջ հաստատուած լատին իշխանապետութիւնը միաժամանակ լաւագոյն գրաւականն էր այն իրողութեան, թէ խաչակիր առաջնորդներէն շատերուն գլխաւոր մտասեւեռումը արեւելքի մէջ սեփական իշխանապետութեան մը տիրանալն էր, որ նաեւ կը փաստուէր Պոհեմոնտի՝ Անախիոքի տիրանալէն ետք (1098 թ.ի Յունիսի 3), դէպի Երուսաղէմ շարունակուող խաչակրական արշաւանքէն հրաժարելովը:

Խաչակիր երկու կրտսեր առաջնորդներու՝ Թանգրատի (Պոհեմոնտի եղբորորդին) եւ Պոլտուինի (Երուսաղէմի առաջին «Թաւաւոր» Կատֆրիի եղբայրը), առաջնորդութեամբ է որ տեղի կ'ունենայ խաչակիր բանակներու առաջին երկփեղկումը: Կիլիկիան Դոններէն շարժելով դէպի հարաւ, Թանգրատ ուղղակի կը քալէ Տարսուսի վրայ, որուն հայ եւ յոյն բնակիչները անմիջապէս յարաբերութեան մէջ կը մտնեն իրեն հետ, աջակցութեան խոստումով: Սակայն Թանգրատ չի յաջողիր պարտութեան մատնել քաղաքին սելճուք թրքական պահակազօրքը: Երեք օրեր ետք, Պոլտուին Տար-

սոն կը հասնի աւելի մեծ բանակով մը: Խաչակիր նոր բանակներու ժամանումը տեսնելով, սելճուք թուրքեր ղերչերով կը փախչին քաղաքէն: Առաւօտուն, Տարսոն իր դռները կը բանայ խաչակիրներուն: Սակայն շուտով պայթարը կը սրի Թանգրատի եւ Պոլտուլինի միջեւ, քաղաքի տիրապետութեան համար: Պոլտուլին, ապաւինած իր մեծաթիւ բանակին, կը յաջողի իր կամքը պարտադրել Թանգրատի, որ ճարահատ՝ կը ստիպուի հեռանալ, շարժիլ դէպի արեւելք, Ատանա:

Թանգրատ հազիւ Տարսոնէն հեռացած, 300 զինուորներ հաշուող նորմանական դունդ մը կը հասնի հոն, սակայն Պոլտուլին կ'արգիլէ անոնց մուտքը քաղաք, պատճառ ըլլալով որ անոնք զոհ երթան ղերչերով իրենց վրայ յարձակող սելճուք թրքական բանակի մը, ու բնաջնջուին մինչեւ վերջին մարդը: Պոլտուլինի վերաբերմուքը խաչակիր իր ընկերներուն նկատմամբ, կը խախտէ իր հեղինակութիւնը, սակայն շուտով վրայ կը հասնի քրիստոնեայ նաւատորմ մը, որուն առաջնորդը՝ Կինեմեր, արհեստով ծովահէն մը ու Պոլտուլինի հայրենակիցն ու ծանօթը, որ Ֆլանտրըզէն ու Հոլանտայէն արեւելք աճապարած էր խաչակիրներուն օգնելու, հաւատարմութիւն կը խոստանայ Պոլտուլինի եւ իր մարդիկը կը դնէ անոր հըրամանատարութեան տակ: Պոլտուլին, երեք հարիւր զինուորներ վար կը դնէ որպէս քաղաքին պահակազօրք, Տարսոնի կառավարչութիւնը կը վստահի Կինեմերի, ու ինք կը յառաջանայ Թանգրատի հետքերով:

Ատանա կիսով կը դառնուէր Լամբրոնի Օշինին տիրապետութեան տակ, մինչ քաղաքին մնացեալ մասին վրայ կ'ըլչիէին սելճուք թուրքերը: Թանգրատէն առաջ, խաչակիր զլխաւոր բանակէն անջատուելով հոն հասած էր պուրկիկնացի ասպետ մը՝ Ուելֆ, որ յաջողած էր քաղաքին զլխաւոր բերդը դրաւել: Ուելֆ կ'արտօնէ որ Թանգրատ Ատանա մտնէ եւ իր բանակին համար պաշար ապահովէ: Թանգրատ քաղաքին կառավարչութիւնը կը թողու Ուելֆի, եւ ինք, Օշինի թելադրանքով, կը քալէ Մսիսի վրայ, հայաքնակ այդ քաղաքը ազատելու համար սելճուք թուրքերու լուծէն: 1097 թ.ի Հոկտեմբերի սկիզբին Թանգրատ կը հասնի Մսիս, որուն հայ բնակչութիւնը կը բանայ քաղաքին դռները, մինչ անոր սելճուք թրքական կայազօրքը կը փախչի:

Պոլտուլին, Տարսոնը ձգելէ ետք կ'աճապարէ միանալու խաչակիր զլխաւոր բանակին: Ծամբան ինք եւս կը հանդիպի Մսիս, ուր թէեւ իր նպատակները խաղաղասիրական էին, բայց եւ այնպէս անխուսափելի կը դառնայ Թանգրատի հետ նոր բախում մը: Այս վերջինը, մասնաւորաբար հրահրուած իր զինակիցներէն, Տարսոնի

մէջ իր կրած պարտութեան վրէժը լուծելու համար, անակնկալ կերպով կը յարձակի Պոլտուխնի վրայ, բայց կրկին կը պարտուի: Կռիւն կը յաջորդէ հաշտութիւնը: Երկուստեք կը համաձայնին հեռանալ Կիլիկիայէն: Պոլտուխն կը շտապէ Մարաշ, ուր իր կիներ մահուան անարին մէջ էր, իսկ Թանդրատ, փոքր կայազոր մը ձգելէ ետք Մսիսի մէջ, կը քալէ Ալեքսանդրեակ (Իսկենտերուն): Ան լուր կը զրկէ Կիւնեմերի, Տարսոն, որ իրեն օգնութեան հասնի: Կիւնեմերի աջակցութեամբ Թանդրատ կը գրաւէ Ալեքսանդրեակը, ուր նոյնպէս պահակազօրք մը կը հաստատէ, ու իր հերթին կը շարունակէ ճամբան՝ խաչակիր գլխաւոր բանակներուն միանալու(1):

Կիլիկիոյ մէջ Թանդրատի ձեռք բերած յաջողութիւնները վառ գոյներով արձանագրած է Ուիլիլմ Տիւրոսցի.

«Լուրերը, որ Թանդրատ զօրաւոր եւ հսկայ բանակով մը իրեն կ'ենթարկէ ամբողջ երկիրը (Կիլիկիան, Ե. Հ. Ք.), շուտով կը հասնին հայ եւ թուրք սատրապներու, որոնք կը բնակէին լեռներուն մէջ: Սարսափը կը պատէ զիրենք՝ թէ ան դուցէ կ'արշաւէ նաեւ իրենց վրայ, կը գրաւէ իրենց քաղաքները եւ կը գերեզմարէ իրենց ժողովուրդները: Նախանձախնդիր մրցակցութեամբ մը, անոնք պատուիրակութիւններ կը զրկեն անոր, որոնք իրենց հետ կը տանին ոսկի եւ արծաթ, ձիեր, ջորիներ եւ մետաքսեղէն: Նմանօրինակ առատաձեռնութեամբ մը անոնք կը յուսան շեղեցնել այս մեծ առաջնորդին զայրոյթը, շահիլ անոր մտերմութիւնը եւ ապահովել բարեկամութեան դաշնագրեր»(2):

Կիլիկիոյ մէջ իրենց կազմակերպած արշաւանքներով, խաչակիր անջատուած բանակները, Թանդրատի եւ Պոլտուխնի առաջնորդութեամբ, կը յաջողին իրենց իշխանութեան տակ առնել Տարսոնը, Ատանան, Մսիսը եւ Ալեքսանդրեակը, ուր իրենց հաստատած կայազօրքերով կը յաջողին պատնէշ մը հիւսել Փոքր Ասիայէն

1) Surpandh, Atonmaji, Msihi եւ Ալեքսանդրեակի համար խաչակիրներուն մը պայքարի մասին տես՝ Gesta, in : A. Krey, *The First Crusade*, London 1921, pp. 120-121. William of Tyre, *A History of Deeds Done Beyond the Sea*. Vol. 1, N.Y. 1943. Fulcher of Charters, *A History of the Expedition to Jerusalem 1095-1127*, Knoxville 1969, p. 89. Joseph F. Michaud, *The History of the Crusades*, vol. 1, Redfield 1855, pp. 116-120. René Grousset, *Histoire des Croisades*, Tome I, Paris 1934, pp. 49-54. S. Runciman, *Constantinople to Antioch*, in: K. M. Setton, *A History of the Crusades*, vol. 1. University of Pennsylvania Press, 1958, pp. 300-302. W. B. Stevenson, *The Crusades in the East*, Beirut, 1968, pp. 22-23.

2) William of Tyre, Vol. I, p. 186.

հիւսիսային Սուրիա սելճուք թրջական հաւանական արշաւանքի մը դէմ, ուր խաչակիրներ, երկար դժուարութիւններէ ետք միայն պիտի յաջողին զբաւել Անտիոքը:

Մարաշի մէջ թանգրատ եւ Պոլտուին կը միանան խաչակիր դլխաւոր բանակին: Հոս կը մեռնի վերջինին կինը՝ Կատհիլտ, որ ընկերակցած էր իր ամուսնոյն: Կատֆրի կը դատապարտէ իր եղբայրը՝ Պոլտուինը, Տարսոնի մէջ թանգրատի եւ նորմանացի զինուորներուն հանդէպ իր բռնած դերքին համար, որ զղջումով կ'ընդունի իր յանցանքը(3): Սակայն Պոլտուին չի դադարի իր սեփական ծրագիրները մշակելէ, որոնց մէջ իր բաժինը ունէր նաեւ Բագրատ:

Բագրատ(4), ազնուական ծագումով հայ մը, Կ. Պոլսէն փախչելէ ետք, ուր ան բանտարկուած էր կայսեր կողմէ, Նիկիոյ մէջ կը բարեկամանայ Պոլտուինի, ու կը դառնայ անոր մշտական բարեկամը: «Ան կատաղի կռուող էր, սակայն նենգասէր ու հաւատարմութեամբ կասկածելի»: Բագրատ տեւականօրէն կը ստիպէ Պոլտուինը որ միանայ իրեն, Եփրատի շրջանին մէջ նոր հողամասեր զբաւելու, որուն, ի վերջոյ, տեղի կու տայ Պոլտուին, եւ երկու հարիւր հեծեալ ասպետներով ու որոշ թիւով հետեակներով, կը շարժի հիւսիս(5): Պոլտուինի հետ, որպէս անոր աւագերէցը, խաչակիր բանակներէն կը բաժնուի նաեւ Փուլշըր, որ, իբրեւ ականատես, պիտի արձանագրէ յաջորդող դէպքերը(6):

Դէպի հիւսիս շարժող Պոլտուինի փոքր բանակը տեղւոյն հայ բնակչութեան կողմէ կը դիմաւորուի մեծ ուրախութեամբ(7): Այս շրջանին մէջ միայն Սամոսատն էր որ կը գտնուէր սելճուք թրջական տիրապետութեան տակ, որուն տէրը՝ Պալտուք, առանձին դի-

3) Նոյնը, էջ 187:

4) Ո՞վ էր Բագրատ: Հայ ժամանակագիրները չեն յիշատակեր գայն: Ուիլիքմ Տիւրոսցի գայն կը ճանչնայ որպէս Բեսուսի Գոզ վասիլին եղբայրը (William of Tyre, Vol. I, p. 304): Արդի պատմագրութեամ մէջ տարբեր կարծիքներ եւ յայտնուած են իր մասին: Միշոյի համաձայն, ան չի բերտասարգութեամ հիւսիսային վրաստանի քաղաքում էր: Վտարուած իր իսկ հպատակներում կողմէ, եւ իրկար ժամանակ Կ. Պոլսոյ մէջ բանտարկեալ, ան կը միանայ խաչակիրներում, իր քաղաքութիւնը վերագրաւելու յոյսով» (J. Michaud, The History of the Crusades, Vol. I, p. 120): Այժմ, տիրապետող կարծիքը սակայն կը հետեւի Ուիլիքմ Տիւրոսցիի:

5) William of Tyre, Vol. I, p. 188.

6) Fulcher, p. 89.

7) William of Tyre, Vol. I, p. 188.

մաղբուքիւն ցոյց չի տար Պոլսուիւնի, որ երկու Հայ փոքր ազնուականներու՝ Ֆերի եւ Նիկուսուսի(8) օգնութեամբ կը յաջողի դրաւել Ռափենտան եւ Թլպաշիրը: Պոլսուիւն Ռափենտան կը յանձնէ Բագրատի, իսկ Թլպաշիրը՝ Ֆերի(9):

Թլպաշիրի մէջ Պոլսուիւն կ'ընդունի Եղեսիոյ Թորոս իշխանին զրկած պատուիրակութիւնը: Թորոս «կոչէր զնա առ ինքն յօգնութիւն իւր ընդդէմ թշնամեաց իւրոց վասն նեղութեանցն, որ ունէր ի մօտաւոր ամիրայացն»(10):

8) Վեր. Եղիա Բասուսի կ'ենթադրէ թէ Ֆեր հաւաքօրէն վրահայ էր, կամ ափիսազ, իսկ Նիկոզիմոս (Նիկուսուս) թերեւս յոյմ (Գող Վասիլ, «Ակիօս», Պէյրուս, 1949, Ե. Տարի, Բիւ 6, էջ 90):

9) S. Runciman, *Constantinople to Antioch*, in: Setton, *A History of the Crusades*, Vol. I, p. 302. Լորանի համաձայն Ռափենտան նախապէս կը պատկանէր Բագրատի, իսկ Թլպաշիր՝ Ֆերի: Պոլսուիւն գրաւելէ ետք այդ երկու ամրոցները, զանո՞ք կը վերադարձնէր իր նախկին տէրերուն: Նիկոզիմոս դրացիին էր Ֆերի (J. Laurent, *Les Croisés et L'Arménie*, Համդէս Ամսօրեայ, 1927, Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 892, 894):

10) Ուսեայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 206: Ս. Սպարապետ, *Տարեգիրք*, Վեներտիկ, 1956, էջ 104: Fulcher, p. 90. William of Tyre, Vol. I, p. 190. Անանուս Ասորիի համաձայն, երբ Եղեսիոյ ժողովուրդը կ'իմանայ Ֆրանգներու Անտիօք ժամանումը, կը պահանջէ Թորոսէն որ հրաւիրէ զանո՞ք, թուրքերու դէմ ֆաղաքը պաշտպանելու համար: Թորոս նախ համաձայն չի գտնուիր նման առաջարկի մը, սակայն տեսնելով որ ֆաղաքացիները անգործ են Եղեսիան պաշտպանելու, եւ անպայման պիտի դիմեն Ֆրանգներուն, «չեսպաններ զրկեց կատօրի դուխին, Ֆրանգ բանակներուն գլխաւորին եւ հրամանատարին խնդրելով իբրև գօրք զրկել երկիրը պաշտպանելու համար: Երբ Ֆրանգները Թէոդորոսի նամակները կարդացին, մեծապէս ուրախացան, եւ զրկեցին Պոլսուիւնը, կատօրիի եղբայրը...» (Անանուս Ասորի, *Առաջին եւ Երկրորդ Խաչակրութիւնները*, Պոսքըն, 1936, էջ 2): Միքայէլ Ասորի կը գրէ թէ Թորոս խստացաւ ֆաղաքը կատօրիի յանձնել (Միքայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1871, էջ 403-404): Թորոս, որ յումադաւան մըն էր, ու հաւանաբար այդ իսկ պատճառով իր ժողովուրդին մեծ համակրամբք չէր վայելեր, Փիլարտոսի կողմէ Եղեսիոյ կառավարիչ կարգուած էր, երբ ֆաղաքը կը գտնուէր անոր տիրապետութեան տակ՝ 1078-1086 թթ.: Փիլարտոսի մտէն ետք ֆաղաքը ինկած էր սելճուկ թուրքերու ձեռքը, սակայն 1094 թ.-ին, Թորոս վերստին յաջողած էր տիրանալ անոր, պահելով անուանակամ ենթակայութիւն մը սելճուկ սուլթանին, որուն կայսրօրը մերժած էր պահել ֆաղաքին մէջ: Ուիլիլմ Տիրոսցի տխուր գոյներով կը ներկայացնէ Թորոսը, զոր որպէս յոյմ կը նանչնայ. «... յամենայնդեպս ամ անպէտ իշխան մըն էր, անկարող պաշտպանելու իր ենթակաները, կամ պաշտպանելու զանո՞ք դքս-

Թորոս՝ Պոլտուլինը կը հրաւիրէր որպէս վարձկան ծառայելու իր հրամանատարութեան տակ, ինչ որ յստակ կերպով կը հասկցուի Անանուն Ասորիի վկայութենէն: Սակայն նման առաջարկ մը անընդունելի կը մնար Պոլտուլինի համար(11): Թորոս կը փոխէ իր առաջարկը, քանի որ ինք տարիքը առած մարդ էր, ու դաւակ չունէր:

«Պոլտուլին կը հրաւիրուի դուքսին (Թորոսի, Ե. Հ. Գ.) կողմէ երթալու հոն (Եղեսիա, Ե. Հ. Գ.), որպէս հաւասար բարեկամներու, հօր եւ դակիի պէս, այնքան ժամանակ որ անոնք կ'ապրին: Ու եթէ Եղեսիոյ դուքսը մեռնի, Պոլտուլին անմիջապէս պիտի տիրանայ քաղաքին եւ դուքսին բոլոր հողերուն, մնայուն ժառանգութեամբ մը, այնպէս որ կարծես ան այս վերջինին հայրը եղած ըլլար»(12):

Դէպի Եղեսիա իր ճամբան շարունակելէ առաջ, Պոլտուլին կ'իմանայ Յերէն, թէ Բագրատ Թուրքերու աջակցութեամբ դաւեր կը սարքէ իրեն դէմ: Հաւանաբար եղածը միայն Բագրատի եւ իր եղբոր՝ Գող Վասիլի միջեւ հաստատուած կապ մըն էր, զոր Յեր՝ նախանձէ թելադրուած, կ'ուզէ օդտադործել Ռավեննայի տիրոջ դէմ: Պոլտուլին ժամանակ չի կորսնցնէր սակայն, կը ձեռքաւորէ Բագրատը ու կը սպառնայ չարչարել զայն մինչեւ որ Ռավեննայի իրեն յանձնէ: Պոլտուլինի կողմէ վտարուելէ ետք, Բագրատ, իր եղբոր՝ Գող Վասիլի օգնութեամբ կը մնայ Թլաչիքի լեռներուն վերայ(13):

1098 թ.ի Փետրուարի սկիզբին, Պոլտուլին ճամբայ կ'ելլէ դէպի Եղեսիա: Պերեճիքի մօտ ան հազիւ կը ճողոպրի Սամոսատի աւերոջ՝ Պալտուքի լարած ծուղակէն, միշտ հայերու օգնութեամբ(14):

բախտութիւններէ» (William of Tyre, Vol. I, p. 190): Մինչ բոլորովին տարբեր է Ռուհայեցիի պատկերացումը, որում ճշմարտացիութեամ չեմք կրնաք կասկածիլ, «... ի մեռն համաքեղ իմաստութեամ նորա եւ արուեստաւոր հնարաւորութեամ եւ բուն գորութեամ եղիւ ազատեալ Ուրիա ի հարկատրութեմէ եւ ի ծառայութեմէ չար եւ դառնացեալ ազգիմ Տափկաց» (Ռուհայեցի, էջ 261):

11) S. Runciman, From Constantinople to Antioch, in : Setton, A History of the Crusades, Vol. I, p. 303.

12) Fulcher, p. 90.

13) S. Runciman, From Constantinople to Antioch, in : Setton, A History of the Crusades, Vol. I, p. 303. R. Grousset, Histoire des Croisades, Tome I, p. 54.

14) Fulcher, pp. 90-91. S. Runciman, From Constantinople to Antioch, in : Setton, A History of the Crusades, Vol. I, p. 303.

«Ճանապարհին, կը դրէ Ծուլըրը, դուք պիտի զարմանա-  
յիք տեսնելով հայերը, որոնք համեստորէն դուրս կու գային  
դիմաւորելու մեզ, խաչեր ու դրօշակներ կրելով, կը համբու-  
րէին մեր ոտքերն ու քղանցքները, Աստուծոյ սիրոյն, քանի  
որ անոնք դիտէին թէ մենք պիտի պաշտպանէինք զիրենք  
թուրքերու դէմ, որոնց լուծին տակ անոնք երկար ճնշուած  
էին»(15) :

1098 թ.ի Փետրուարի 6ին, Պոլտուին Եղեսիա կը հասնի  
վաթսուն ձիաւորներով(16), ուր կը դիմաւորուի Թորոսի, անոր  
կնոջ եւ քաղաքին բնակչութեան կողմէ : Թորոս կը յարգէ իր խոս-  
տումը, ու Պոլտուինը կը հռչակէ իր հաւասարն ու ժառանգորդը(17) :  
Հատին պատմագիրներու համաձայն, որդեգրութիւնը տեղի կ'ունե-  
նայ արեւելեան արարողութեամբ մը : Պոլտուին կը մերկանայ մին-  
չեւ իր մէջքը, Թորոս լայն շապիկ մը կ'առնէ վրան, զոր կ'անցընէ  
նաեւ Պոլտուինի գլխէն, ու երկուքը իրենց մերկ կուրծքերը կը շը-  
փեն իրարու : Նոյնը կը կրկնէ նաեւ Թորոսի կինը(18) :

Պոլտուինի Եղեսիա ժամանումէն ետք, Թորոսի մօտ կու գայ  
նաեւ Կարկարի իշխանը՝ Կոստանդին : Մէկ քանի օրեր ետք, Թորոս  
կը թելադրէ Պոլտուինի որ յարձակի Սամոսատի վրայ : Հսկայ բա-  
նակով մը, որ իր մէջ կը հաշուէր Եղեսիոյ եւ իր դաւառներուն,

15) Fulcher, p. 91.

16) Ուռհայեցի, էջ 260 : Սմբատ՝ հարիւր ութսուն ձիաւոր կը գրէ (Սմբատ  
Սպարապետ, էջ 104) :

17) Fulcher, p. 91.

18) S. Runciman, *From Constantinople to Antioch*, in : Setton, *A History of the Crusades*, Vol. I, p. 303. J. Michaud, *The History of the Crusades*, Vol. I, p. 122. Ուիլիլմ Տիրացցիի համաձայն, Պոլտուին երբ Եղե-  
սիա կը հասնի, Թորոս կը մերժէ նախապէս իր տուած խոստումը, ու կ'առաջար-  
կէ Պոլտուինի որ զինակցի իրեն՝ սելուք թուրքերու դէմ քաղաքի պաշտպանու-  
թեամբ, որում փոխարէն, Պոլտուին իմ պիտի որոշէ ստամախի վարձատրութիւ-  
նը : Պոլտուին կը մերժէ այս առաջարկը, որ զինք կը վերածէր հասարակ վարձ-  
կան զինուորի մը, եւ կ'որոշէ վերադառնալ : Բայց ժողովուրդին մնշումին վրայ,  
Թորոս կը վերադառնայ իր նախկին խոստումին, ու կ'որոշեցրէ Պոլտուինը  
(William of Tyre, Vol. I, p. 191) : Ուռհայեցի կը գրէ, «Եւ արքայ կուրապա-  
զատմ Թորոս բազում սէր եւ տուրս կուսին եւ հաստատեաց միաբանութիւն ընդ  
մաս» (Ուռհայեցի, էջ 260 : Նաեւ տես՝ Սմբատ Սպարապետ, էջ 104), բայց եր-  
բէք չ'ակնարկեք թէ Թորոս Պոլտուինը որոշեցրեց եւ գայն իր ժառանգորդը հըռ-  
չակեց :

ինչպէս նաեւ Հոն ժամանած Ֆրանզ զօրքերը, Պոլտուին կը քալէ Պալտուքի դէմ: Սակայն արշաւանքը կ'աւարտի ձախողութեամբ: Պոլտուին եւ Կոստանդին «մագապուրծ» կը փախչին Եդեսիա, իրենց ետին ձգելով Հազար մեռեալ(19):

Սամոսատի ձախող արշաւանքէն ետք, Եդեսիոյ մէջ դաւ մը կը սկսի նիւթուիլ Թորոսի կեանքին դէմ: Դաւաղիւրները իրենց ծըրադէրը կը յայտնեն նաեւ Պոլտուինի, անոր խոստանալով Եդեսիոյ իշխանութիւնը: Դաւաղիւրները ապահովելէ ետք Պոլտուինի Համաձայնութիւնը, իրենց կը միաբանեցնեն նաեւ Կարկարի Կոստանդինը: Դաւաղիւրները, «զգամենայն բազմութիւն քաղաքին» կը շարժին Թորոսի դէմ: Թորոս, ճարահատ, քաղաքը կը խոստանայ իրենց, պայմանով որ ազատ թողուն զինք եւ իր կիներ, երթալու իր աներոջ՝ Մելիտինէի Գարրիէլին մօտ: Պոլտուին, Առաքելոց եկեղեցիին մէջ, բոլոր սուրբերուն անունով կ'երզնու խնայել Թորոսի կեանքը: Սակայն ան չի պահեր իր երդումը, երբ Քառասուն Սուրբերու տօնին Երեքշաբթի օրը ամբողջ կը յարձակի Թորոսին վրայ, ու զայն կը նետէ պարիսպէն վար, բազմութեան մէջ, որ «առհասարակ դիմեալ միաբան ի վերայ նորա եւ Հարաչար մահուամբ եւ բազմախոց սուսերօք սպանանէին զնա, ... եւ պարան կապեցին յոտս նորա եւ խայտառականօք քաշին զնա ընդ քաղաքամէջսն, եւ յայսմ աւուր ուրացան զերդումն, զոր եղին, եւ յետ այսորիկ տան զՈւռհա ի ձեւս Պաղտին կոմսին»(20):

19) Ուռհայեցի, էջ 260-261: Սմբատ Սպարապետ, էջ 105: Ուիլիլմ Տիւրոսցի կը գրէ Բէ Եդեսիոյ ժողովուրդը մեծապէս կը տառապէր Սամոսատի իշխանէն, որ իրենց վրայ ծանր հարկեր դրած էր, գիրեմէ կ'աշխատեցնէր ստրուկներու պէս, եւ իրենց գաւակները պատանդ կը պահէր իր մօտ: «Այնպէս որ ամբողջ ժողովուրդը արցունքաւ աչքերով ինկամ Պոլտուինի ռոքերուն», ու խնդրեցին անկէ որ գիրեմէ ազատէ Սամոսատի տիրոջ բռնութիւններէն: Պոլտուին կ'ընդառաջէ ժողովուրդի խնդրանքին, ու կը փախէ Սամոսատի վրայ: Սակայն Պալտուինի կազմակերպած զօրաւոր պաշտպանութեան դէմ ձախողելով, կը վերադառնայ ձեռնումայն, իր ետին՝ ամբարշտած վայրի մը մէջ ձգելով խուփ մը ասպետներ, որոնց կը հրամայէ տեսլանքէն պատերազմական վիճակի մէջ պահել Սամոսատը, որպէսզի ան չկարողանայ կրկնել իր ընթացքը (William of Tyre, Vol. I, p. 192): Հետաքրքրական է նշել որ Տիւրոսցի չի խօսիր Պոլտուինի առջնորդած բանակին կրած ծանր կորուստին մասին, ոչ ալ անոր «մագապուրծ» փախուստին, ինչ որ անկասկած պիտի մտնացնէր իր հերոսը: Իսկ Ֆուլչըրը, բացարձակ լուսբիւն կը պահէ այս բոլորին մասին:

20) Ուռհայեցի, էջ 261-262: Սմբատ Սպարապետ, էջ 105-106: Ամանուս Ասորի, էջ 2: Ուռհայեցի, աւելի ետք կու տայ այլ մանրամասնութիւն մը, ըստ

Երուսաղէմի անկումէն շատ առաջ, 1098 թ.ի Մարտի 10ին, Պոլտուին պաշտօնապէս կը ստանձնէ Եղեսիոյ իշխանութիւնը(21), արեւելքի մէջ հաստատելով լատին առաջին իշխանապետութիւնը:

Եղեսիոյ նորահաստատ իշխանապետութեան գոյութիւնը դժուար թէ կարելի ըլլար ապահովել խաչակիր ամբողջ ասպետներու զինակցութեամբ: Պոլտուին անմիջապէս կը ձեռնարկէր նոր միջոցառումներու, որոնք իր դիրքն ու հեղինակութիւնը պիտի զօրացնէին շրջանին մէջ: Ան իրեն հաւատարիմ հայերը կը հաւաքէ իր շուրջը նախ, որոնց զործակցութեան դատապարտուած էր դիմելու, ապա ձեռք կը զարնէ քաղաքի գանձին, որ դիզուած էր բիւզանդացիներու օրէն, եւ ճոխացուած՝ Թորոսի կողմէ: Պալտուք, իմանալով որ Պոլտուին դարձած է Եղեսիոյ բացարձակ տէրը, ու վախնալով որ ան նոր յարձակում մը կը կազմակերպէ իրեն դէմ, պատուիրակութիւն մը կը շրջէ անոր մօտ, ու կ'առաջարկէ Սամոսատի իշխանապետութիւնը ծախել անոր 10.000 ոսկեդրամի: Պոլտուին կ'ընդունի առաջարկը, ու յաղթական մուտք կը գործէ Սամոսատ: Ձեռք բերուած այս յաղթանակը առաւել եւս կը զօրացնէ Պոլտուինի դիրքը, որ նաեւ Եղեսիա կը հրաւիրէ Պալտուքն ու անոր պահակազուսէրը, որպէս վարձկան ծառայելու իրեն մօտ(22):

Անտիոքի դիմաց բանակ զարկած խաչակիրները երբ կ'իմանան թէ «Պոլտուին Եղեսիան գրաւած է», շատ կ'ուրախանան: Պոլտուին, իր ձեռք ձգած հարստութենէն նաեւ առատ բաժին կը հանէ

որում, ամբոյք կը գլխատէ Թորոսը, ու անոր գլուխը ձողի մը ցցած, կը մետ Ս. Փրիկէ եկեղեցւոյ առջեւ (Ուսեայեցի, էջ 271): Ֆուլչըր, որ սկանապես եղած պէտք է ըլլայ այս բոլորին, կը փորձէ պաշտպանել Պոլտուինը, որ չէր յաջողած փրկել Թորոսի կեանքը: «Մեր հոն գտնուելէն տասնհինգ օրեր ետք, քաղաքակերպը մեղքամտութեամբ դաւեցին, սպաննելու համար իրենց իշխանը, քանի որ գայն կ'ատէին, եւ Պոլտուինը բարձրացնելու իշխանութեան՝ կառավարելու երկիրը: Ասիկա քեղադրուած էր եւ գործադրուած: Պոլտուին եւ իր մարդիկը շատ մեղուեցան, քանի որ չէին յաջողած անոր համար գրութիւն ձեռք բերել» (Fulcher, p. 91): Ուիլիլմ Տիրոսցի, միշտ հեռու պահելով Պոլտուինը որքէ մեղադրամբէ, կը գրէ թէ Թորոս երբ կը փորձէր ջուհնով մը վար իջնել բերդին պատուհանէն, գայն մետաքս սպաննեցին (William of Tyre, Vol. I, p. 194):

21) Ուիլիլմ Տիրոսցի, Պոլտուինը կատարեալ ասպետ մը մերկայացնելու իր միջոց մէջ, միմչեւ իսկ չի դամոզադիր ըսելու թէ եղեսիոյ ժողովուրդը զինք իշխանութեան բարձրացուց, «հակառակ իր բողոքներուն» (William of Tyre, Vol. I, p. 194):

22) Ամանուն Ասրի, էջ 7: William of Tyre, Vol. I, p. 194. S. Runciman, A History of the Crusades, Vol. I, London 1965, p. 208.

խաչակիր միւս առաջնորդներուն, անոնց զրկելով ոսկի, արծաթ, մետաքսեղէն եւ ընտիր ձիեր: Առաւել՝ Պոլտուին կը հրամայէ որ Թլպաշիրի եւ անոր շրջապատին ամբողջ եկամուտը՝ ցորեն, գարի, իւղ, գինի եւ 50-000 ոսկեդրամ, տրամադրուի իր եղբօր, Կատֆրի: Պոլտուինի յաջողութեան լուրը, ինչպէս նաեւ Անտիոքի դիմաց յարուցուած դժուարութիւնները, կը քաջալերեն շատ մը ասպետներ, որ լքեն Անտիոքը եւ միանան Պոլտուինի, որուն նորահաստատ իշխանապետութիւնը սքանչելի ասպարէզ կը խոստանար իրենց նիւթապաշտ ակորթակներուն: Պոլտուին, իր հարուստ դանձէն նուէրներ կը բաշխէ անոնց, միաժամանակ իր անձնական օրինակով կը քաջալերէ զանոնք որ ամուսնանան ժառանգատէր հայուհիներու հետ(23):

Պոլտուին, որ Մարաշի մէջ կորսնցուցած էր իր կիներ, որմէ զաւակ ալ չունէր, կ'ամուսնանայ Կոստանդին Ռուբինեանի եղբօր՝ Թորոսի աղջկան, Արասայի հետ:

«Յետոյ ան (Պոլտուին, Ե. Հ. Բ.) ամուսնացաւ Թաֆրոզ (Թորոս) անունով հայ աղնուական իշխանի մը աղջկան հետ: Ան (Թորոս, Ե. Հ. Բ.), իր եղբօրը Կոստանդինի հետ, անառիկ ամրոցներու եւ քաջ մարդերէ բաղկացած մեծ ուժերու տէր էին Տաւրոսի լեռներուն շրջակայքին մէջ: Իրենց ունեցած հարստութեան եւ անսահման ուժին համար, այս իշխանները որպէս թաղաւորներ կը մեծարուէին իրենց ժողովուրդին կողմէ»(24):

23) Ամառն Ասորի, էջ 2: William of Tyre, Vol. I, p. 238. S. Runciman, A History of the Crusades, Vol. I, p. 208.

24) William of Tyre, Vol. I, pp. 415-416. Պատմագրութեան մէջ անհամաձայնութիւն կը տիրէ Արտայի հօր՝ Թորոսի շուրջ: Ալիշան գայն կ'ընդունի որպէս Ռուբին Ա.ի տղան եւ Կոստանդին Ա.ի եղբայրը (տես՝ Սիսուան, էջ 47): Հացունի եւ Տաֆ. Տէր Ղազարեան Թորոսը կը ցանցնան որպէս Ռուբին Ա.ի թոռնիկը եւ Կոստանդին Ա.ի տղան (տես՝ Հ. Վարդան Հացունի, Հայուհի Պատմութեան Մէջ, Վեներտիկ 1936, էջ 67, 400: Տաֆ. Յ. Տէր Ղազարեան, Հայկական Կրթիկէս, Ամբիլիաս 1966, էջ 201): Ռուսիսման կ'ենթադրէ թէ օտար սկզբնաղբիւրներու մէջ յիշուած Թաֆնուրը կամ Թաֆնուրը, ուրիշ մէկը չէ, եթէ ոչ Մարաշի կառավարիչ Թաթուրը (տես՝ S. Runciman, A History of the Crusades, Vol. I, p. 208): Տիւրքիէ, Ռուսիայեցի ֆրանսերէն լեզուի քարգամնուրը, Թորոսը կը ցանցնայ որպէս Կոստանդին Ա.ի եղբայրը, յիշելով միաժամանակ որ իմֆ չէ համընդացած Կոստանդինի Թորոս անունով մէկ եղբօրը (տես՝ Նոյնը, էջ 209, ծան. 1): Մեզի անծանօթ կը մնայ Թորոսի մահուան քուակամը: Ալիշան եւ Հայր Ս. Ազբլեան, իրենց պատրաստած Ռուբինեան տահմադարեան մէջ չեն նշեր Թորոսի մահ-

Արտայի հետ կնքած իր ամուսնութեամբ, Պոլտուին ոչ միայն կը ախրանայ 60.000 ոսկեղրամ դրամօժիտի մը, որուն 17.000ը կը դանձէ անմիջապէս, հապա նաեւ անորոջ խոստում կը ստանայ հետագային ժառանգելու իր աներոջ հողերը(25) :

Պոլտուին իր յաջորդ յաղթանակը կ'արձանադրէ Սրուճի դէմ, որ «այն ատեն հարուստ էր և ունէր մեծ բնակչութիւն, որ բազկացած էր միւսլիմաններէ և քրիստոնեաներէ և ամէն տեսակ նշանաւոր վաճառականներէ : Հովիտը նոյնպէս հարուստ էր, բաղմաբնակիչ և դիւզակներով լեցուն» : Եղեսիան Պոլտուինի կողմէ գրաւուելէն ետք, Սրուճ կ'իյնայ Քրանդ նորահաստատ կոմսութեան և Եփրատի եզերքներուն բնակող հայոց յարատեւ յարձակումներուն տակ : Պալաք, Սրուճի տէրը, «համոզուելով որ Սրուճ չի կրնար գոյութիւնը պահել քրիստոնեայ երկիրներու միջեւ», ղեսպանութիւն մը կը զրկէ Պոլտուինի, յայտնելով անոր որ ինք պատրաստ է Սրուճը յանձնելու իրեն, պայմանով որ Պոլտուին համաձայնի իր առաջարկած պայմաններուն, և երզումով հաստատէ իր խոստումը : Պոլտուին կը համաձայնի ներկայացուած պայմաններուն, ձեռք կը դնէ քաղաքին ու անոր միջնարկին, ու հոն կառավարիչ կը նշանակէ Ծուքնըրը(26) :

Սրուճի գրաւումով, Եղեսիայէն Անտիոք սպահով ճանապարհ մը կը բացուի խաչակիրներուն համար :

Պոլտուին, Եղեսիոյ իշխանական իր աթոռը ամրապնդելէ ետք, իր կապերը չի խզեր խաչակիր դիւսաւոր բանակներուն հետ : Իր առաջին, բայց անուղղակի նպաստը կ'ըլլայ Մուսուլէն Անտիոք՝ Եազի Սիւանի օչնութեան փութացող ֆերպողայի հսկայ բանակնե-

ումն քուակմը (տես՝ Սիսուան, էջ 45, և Սմբատ Սպարապետ, կողքի երբայք էջէն առաջ դրուած տախտակը) : Իսկ Կոստ Գոյեմբերկ, իր պատրաստած աւարիմեան տան տախտակին մէջ, որպէս Թարոսի մահուան քուակմ կը գշէ ճ1104 Ք.էն ետք» (տես՝ Count W. H. Rudt-Gollenberg, *The Rupenids, Hethumids and Lusignans*, Paris, 1963, I. (Rup.)) : Յամեճայն դէպս, Ուիլիլմ Տիւրոսցիի վկայութիւնը յստակ կերպով կը բացատրէ թէ Պոլտուին ամուսնացաւ Կոստանցիի եղբոր՝ Թարոսի աղջկան հետ, և թէ երկու եղբայրները կը բնակէին Տարոսի լեռներուն վրայ : վկայութիւններ, որոնք ոչ մէկ կերպ առիք կու տան եմբողքիւ թէ Արտա Կոստանցիի թոռն էր, և կամ՝ Մարաշի Թաբուլիմ աղջիկը :

25) S. Runciman, *A History of the Crusades*, Vol. I, pp. 208-209. Սիսուան, էջ 47 :

26) Ամանուն Ասորի, էջ 5 : Ուիլիլմ Տիւրոսցիի համաձայն, Պոլտուին պատերազմով կը գրաւէ Սրուճը, որուն բնակիչները անձնատուր կ'ըլլան, և տարեկան տուրք վճարել կը խոստանան անոր (*William of Tyre*, Vol. I, pp. 194-195) :

րուն ուշադրութիւնը դրաւելը: Քերպողա, զէպի Անտիոք իր ճանապարհին վրայ, երեք շաբաթներ՝ 1099 թ.ի Մայիսի 4-25, ապարդին կերպով պաշարուած կը պահէ Եղեսիան, մինչ անդին, Եաղի Սիան անհամբեր կը սպասէր անոր առաջնորդած բանակներուն: Յուսահատ, եւ իր մարդոց թելադրանքով, Քերպողա կը քահէ Եղեսիոյ պաշարումը, ու կը քալէ Անտիոքի վրայ: Սակայն ուշ էր արդէն: Մինչեւ իր հասնիլը, խաչակիրները յաջողած էին դրաւել քաղաքը(27):

Աւելի ետք, իր եղբոր՝ Կատֆրիի խնդրանքով, Պոլտուին 3000 հաշուող բանակով մը օդնութեան կը փութայ անոր, երբ ան կ'աճապարէր իր հերթին օդնելու Ազէզի կառավարիչին՝ Օմարի, որ ապստամբած էր իր տիրոջ՝ Հալէպի Ռըտուանին դէմ(28): Մահմետական իշխանի մը հասցուած այս օդնութիւնը խորթ չէր թուեր խաչակիր Պոլտուինի, որուն համար «հրապարակաւ յայտարարուած անհաւատներ չկային արեւելքի մէջ»(29):

Ազէզի մէջ Պոլտուինի յաղթական ներկայութիւնը առաւել եւս կը տարածէ իր համբաւը: Շատեր կը վազեն Եղեսիա, իրենց թշուառութեան վերջ մը տալու յոյսով: Պոլտուին առատածեռնօրէն կը վարձատրէ զանոնք, ու կը վերադարձնէ: Սակայն մեծ կ'ըլլայ նաեւ թիւը անոնց, որոնք կը հաստատուին Եղեսիոյ մէջ: Այնքան, որ Եղեսիոյ բնակիչները կը սկսին ձանձրանալ լատիններու ներկայութենէն, որոնք, մոռնալով իրենց հիւրի հանգամանքը, շուտով կը սկսին տիրապետողի դերք որդեգրել: Պոլտուին, իր հերթին, կը սկսի նուազ կարեւորութիւն տալ հայերուն, ու աւելի նուազ դիմել անոնց խորհուրդներուն, որոնք զինք բարձրացուցած էին իշխանութեան: Տիւրոսցի չի փորձեր ծածկել վերոյիշեալ ճշմարտութիւնը, երբ կը գրէ.

«Քրիստոնեաները հիմա այնպիսի համբանքով սկսան համախմբուիլ Եղեսիա, որ լատիններու բազմութիւնը քաղաքին մէջ ձանձրացուցիչ դարձաւ քաղաքացիներուն, այս հիւրերը սկսան իրենց հիւրընկալներուն դժուարութիւն յարուցանել, իրենց տիրապետողի կեցուածքին պատճառով: Պոլտուին, նոյնպէս, սկսաւ առաւել նուազ չափով կախում ու-

27) William of Tyre, Vol. I, pp. 245-246. Ամանուն Ասորի, էջ 3: Ուսայեցի, էջ 283: Սմբատ Սպարապետ, էջ 106: Ուսայեցիի և Սմբատի համաձայն, Քերպողա 40 օր պաշարուած կը պահէ Եղեսիան, ինչ որ միշտ չէ:

28) William of Tyre, Vol. I, pp. 301-304.

29) W. Besant and E. Palmer, Jerusalem, The City of Herold and Saladin, London, 1889, p. 235.

նենալ այն ազնուական քաղաքացիներու խորհուրդէն, որոնց չնորհիւ ան շահած էր այդ մեծ քաղաքը»(30) :

Տակաւին՝ քաղաքին շրջակայ հողերը Պոլտուին կը յանձնէ նորեկներուն, որոնք արեւմուտքի աւատապետական դրութեան հաւատարիմ, կը փորձեն ճորտացնել բնիկ ժողովուրդը(31) :

Քաղաքացիք անտարբեր չեն մնար Պոլտուինի եւ լատիններուն բռնած վերոյիշեալ կեցուածքին նկատմամբ: Անոնք վախնալով որ Պոլտուին ի վերջոյ զիրենք պիտի զրկէ իրենց ունեցած ամբողջ ըստացուածքէն, կը համաձայնին շրջակայ թուրքերուն հետ, որ արկածի մը զոհ դարձնեն Պոլտուինը, եւ կամ՝ զայն վռնտեն քաղաքէն: Սակայն հաւատարիմ բարեկամ մը Պոլտուինի կ'իմացնէ դաւադրութիւնը, ու այս վերջինը կատաղի հարուածով մը կը զսպէ դաւադիրները: Ան կը կոչուի դաւադիրներուն առաջնորդները, նուազ յանցաւորները կը վռնտէ քաղաքէն ու կը սեփականացնէ անոնց ըստացուածքները, իսկ մնացեալները, որոնց արտօնութիւն կը տրուի քաղաքին մէջ մնալու, իրենց ամբողջ հարստութիւնը կը յանձնեն Պոլտուինի: Այսպէս՝ Պոլտուին կը սեփականացնէ 20.000 կտոր ոսկի, զոր կը բաժնէ իր հաւատարիմներուն, որոնց աջակցութեամբ քաղաքն ու անոր շրջապատը առած էր իր տիրապետութեան տակ: Մինչեւ իսկ իր աները՝ Թորոս, վախնալով որ Պոլտուին պիտի պահանջէ խոստացուած դրամօժիտին մնացեալը, զաղտնորէն կը փախչի Լեոները, ուր իր սեփական ամբոցները ունէր(32) :

Պոլտուինի արձանագրած այս յաջողութիւններուն ի տես, Պալաք եւ Պալտուք կը փորձեն նոր դաւադրութիւն մը սարքել անոր դէմ: Պալաք, իր տրամադրութեան տակ գտնուող վերջին բերդը կը խոստանայ Պոլտուինի, սակայն կը խնդրէ որ ան անձամբ զայ ըստանձնելու զայն: Պոլտուին կ'ընդունի առաջարկը, սակայն վերջին պահուն, իր ընկերներուն խորհուրդով, կը հրաժարի մուտք գործել բերդէն ներս, եւ միայն տասներկու ասպետներ կը զրկէ, որոնք անմիջապէս կը դերեվարուին ամրոցին մէջ պահուելու: Պալաքի զինեալ պահակազուղին կողմէ: Պոլտուին, զայրացած, սակայն անկարող բերդը գրաւելու, կը վերադառնայ Եդեսիա, չիչ ետք իր զայրոյթը թափելու համար Պալտուքի վրայ: Այս վերջինը, որ Սամոսատը ծախելու ատեն խոստացած էր իր կիներն ու զաւակները, ինչպէս նաեւ իր ամբողջ հարստութիւնը Եդեսիա բերել, թերացած

30) William of Tyre, Vol. I, p. 305.

31) S. Runciman, A History of the Crusades, Vol. I, p. 211.

32) William of Tyre, Vol. I, pp. 305-306.

էր այդ առաջադրանքին մէջ: Եւ երբ օր մը ան կը մօտենայ Պոլտուինի՝ եղած ձգձուցումը սլառճառարանելու, կոմսը կը հրամայէ ձերբակալել զայն ու զլիստակ(33):

Ճեր, որ օգնած էր Պոլտուինի՝ Ռայկնտայէն վտարելու համար Բազրատը, ինք ալ իր հերթին զոհ կ'երթայ Եղեսիոյ կոմսին եւ կը կորսնցնէ իր դերքը(34):

Պոլտուին հիմա բացարձակ տէրն էր Եղեսիոյ եւ իր շրջապատին, Սամոսատի, Սրուճի եւ Թլպաշիբի, եւ Ֆրանգ զերակայութիւնը այդ տեղերուն մէջ ոչ մէկ մրցակից կրնար ունենալ: Միակ հեղինակութիւնը, որ կ'անհանդատացնէր Պոլտուինը, Քեսունի Գող Վասիլն էր, որ իր եղբօր՝ Բազրատի հետ կը մերժէր անոր իշխանութիւնը, ու կը շարունակէր ինքնակամ կերպով վարել իր դորձերը: Աղէզի Օմար իշխանին իր հասցուցած օգնութենէն վերադարձին, Պոլտուին, Գող Վասիլի եւ Բազրատի որդեղրած ընթացքէն դժգոհ, զոր Տիւրոսցի կը բացատրէ աւարարութեամբ եւ իրենց ենթականերուն հանդէպ անոնց կատարած բռնութիւններով, յիսուն Ֆրանգ ասպետներ կը զրկէ անոնց դէմ, որոնք, շրջանի ժողովուրդին հետ «կը մտնեն անոնց ամբողջներէն ներս, հիմնայտակ կը կործանեն զանոնք» դէթ չափով մը կարենալ զսպելու համար երկու եղբայրները(35):

Պոլտուինի թշնամութիւնը Գող Վասիլի դէմ հաւանաբար արդիւնք էր նաեւ այն իրողութեան որ հայ իշխանապետը աւելի կը համակրէր Պոհեմոնտի, քան իրեն՝ Պոլտուինի(36): Անքնական չէր այս դերքորոշումը, եթէ մտաբերենք թէ Պոլտուին ինչպէս վարձատրած էր Բազրատի աջակցութիւնը: Ճիշդ էր որ հայ իշխանները դարձած էին դէպի Պոհեմոնտը, որուն բացայայտ մէկ վկայու-

33) Նոյնը, էջ 306-308:

34) J. Laurent, *Les Croisés et l'Arménie*, Հանդէս Ամսօրեայ, 1927, էջ 897:

35) William of Tyre, Vol. I, pp. 304-305. Տիւրոսցիի հակակրօնքիւնը հայ իշխաններուն հանդէպ հասկնալի ըլլալով մէկտեղ, դժուար թէ կարիք ըլլայ հաւատալ թէ Պոլտուին՝ իր զրկած յիսուն զինեալ ասպետներով կը յաջողէր զսպել զամոմբ ու հիմնայտակ կործանէր ամենց ամբողջները: Յաջորդ տասնընիմզ տարիներու ընթացքին Գող Վասիլի խաղացած կարեւոր դերը շրջանի քաղաքական, զինուորական ու դիւանագիտական մարզերուն մէջ, ապահով կերպով կը վկայենք թէ հայ իշխանապետը անհամբատ աւելի մեծ ոյժ մը կը մերկայացնէր, քան այն՝ գոր Տիւրոսցի կը փորձէ պատկերացնել:

36) Եղիա Քասունի, *Անթէպի եւ Շրջանակին Պատմութիւնը*, (տես՝ Գ. Ս. Սարափեան, *Պատմութիւն Անթէպի Հայոց*, Ա. հտր., Լոս Անճելըս, 1953), էջ 222:

Թիւնը կը գտնենք Տիւրոսցիի մօտ : Պոլտուին, Եդեսիան զբաւելէն ետք, որպէս նուէր, տաղաւար մը կը զրկէ իր եղբօր՝ Կատֆրիի : Սակայն ճանապարհին, Բազրատ կը կողոպտէ տաղաւարը, ու զայն կը յանձնէ Պոհեմոնտի : Կատֆրիի բուռն պահանջքին վրայ, եւ խաշակիր այլ առաջնորդներու միջնորդութեամբ միայն՝ Պոհեմոնտ կը վերադարձնէ տաղաւարը, ու կրկին խաղաղութիւն կը տիրէ առաջնորդներուն միջեւ(37) :

Եդեսիոյ անմիջական շրջապատին մէջ միայն Պերն (Պերե-ճիք) էր որ կը մնար Վասակ Պահլաւունիի որդիներուն՝ Ապլլարիպի եւ Լիկոսի ձեռքին մէջ, զոր անոնք զբաւած էին սելճուք թուրքերէն(38) : Պոլտուին արտօնած էր Ապլլարիպին պահել Պերեճիքը, որուն զայն կառավարիչ ճանչցած էր(39) : Պոլտուինի այս կեցուածքը սակայն պէտք չէ բացատրել անով որ ան առանձին համակրանք ունէր Ապլլարիպի հանդէպ : Գող Վասիլի, ու հաւանաբար Կոստանդին Ռուբինեանի ներկայութիւնն էր որ զպուշացուցած էր Պոլտուինը, Ապլլարիպը իր հողերէն հեռացնելու մասին մտածելէ(40) :

1099 թ.ին, Պոլտուին, Պոհեմոնտի հրակէրով ու անոր ընկերակցութեամբ, Երուսաղէմ կը հասնի Դեկտեմբերի 21ին, ուխտազնացի իր պարտականութիւնը կատարելու համար : Ծնունդը հոն անցընելէ ետք, երկուքն ալ կը վերադառնան իրենց քաղաքները(41) :

1100 թ.ի ամբան, Մելիտինէի հայազգի, բայց յունադաւան կառավարիչը՝ Գաբրիէլ, որ այդ պաշտօնին նշանակուած էր Փիլարտոսի կողմէ, կը դիմէ Պոհեմոնտի, խնդրելով անոր պաշտպանութիւնը Սերաստիոյ Տանիշմենտ էմիրին, Մելիք Ղազի Կիւմիւլ-թիքէնի դէմ, որ հսկայ բանակով մը կը քալէր Մելիտինէի վրայ : Պոհեմոնտ անմիջապէս կ'ընդատալէ խնդրանքին, եւ 300 ասպետներ ու հետեւակ զինուորներու խումբէ մը բաղկացած բանակի մը զլուխը անցած, որուն մէջ նաեւ հայեր կային, կը փութայ Մելիտինէ : Իրեն կ'ընկերակցին իր զարմիկը՝ Ռիշարտ Սոլերնոցի, եւ Անտիօքի ու Մարաշի հայ Լպիսկոպոսները՝ Կիպրիանոս ու Գրիգորիս : Սակայն Պոհեմոնտ զոհ կ'երթայ իր ինքնավստահութեան և անփութութեան : Ուռհայեցիի համաձայն, ան «անմտութեամբ եւ ամենայն

37) William of Tyre, Vol. I, pp. 238-239, 305.

38) Ուռհայեցի, էջ 337: Վարդան Վրդ., էջ 117-118: Ամմոն Ասորի, էջ 3:

39) S. Runciman, A History of the Crusades, Vol. I, p. 211.

40) Միսուս, էջ 48:

41) Herold S. Fink, The Foundation of the Latin States, 1099-1118, in : Setton, A History of the Crusades, Vol. I, pp. 374-375.

(ան)պատրաստութեամբ» կ'առաջնորդէ իր բանակը, որ Մելիտոնէն Աքռուր հովիտէն բաժնող բլուրներուն վրայ կ'իյնայ Կիւմիւղ-թիքէնի ծովափը: Օղոստոսի 15ին, «եղեւ կոտորումն ամենայն զօրացն Փռանկայ եւ Հայոց»: Տանիշմենա զօրքերը կը սպաննեն նաեւ երկու հայ եպիսկոպոսները, ու զերի կը վերցնեն Պոհեմոնտն ու Ռիչարտը: Պոհեմոնտ անմիջապէս լուր կը ղրկէ Պոլտուինի որ աճապարէ իրեն օգնութեան: Ան իր մաղէն փնջիկ մըն ալ կը ղրկէ Եղեսիոյ կոմսին, որպէսզի ան հետու մնայ կասկածներէ: Պոլտուին, թէեւ փոքրաթիւ բանակով մը կ'աճապարէ Մելիտոնէն, սակայն իր ճարպիկ ռազմավարութիւնը՝ յառաջացող մեծ բանակի մը արձագանգը կը տարածէ ամէն կողմ, ինչ որ կը ստիպէ Կիւմիւղթիքէնը որ քակէ Մելիտոնէնի պաշարումը եւ քաջուի Նիկիսար (Նէոկեսարիա), իր հետ տանելով ձերբակալուած Պոհեմոնտն ու Ռիչարտը: Պոլտուին, ապարդիւն կերպով երեք օրեր հետապնդելէ ետք տանիշմենա զօրքը, կը վերադառնայ Մելիտոնէն, ուր, Գաբրիէլ, արքայական ընդունելութիւն մը կը սարքէ ի պատիւ Եղեսիոյ կոմսին, ու կը մտնէ անոր վաստակութեանը մէջ: Պոլտուին, փոքր պահակապուստ մը ձգելէ ետք Մելիտոնէն, կը վերադառնայ Եղեսիա(42):

Պոլտուինի բախտը սակայն պիտի ժպտէր նաեւ այլ կերպ: 1100 թ.ի Յուլիոսի 18ին, Կատֆրի, Պոլտուինի եղբայրն ու Երուսաղէմի խաչակիր առաջին «թագաւորը» (Կատֆրի կը մերժէր «թագաւոր» տիտղոսը, որուն փոխարէն կը կրէ «Նուիրուած Պաշտպանը Սբ. Գերեզմանին» կոչումը), կը մեռնի Եաֆաթի մէջ(43): Սուսափե-

42) William of Tyre, Vol. I, pp. 411-412. Fulcher, pp. 134-136. Bar Hebraeus, The Chronography, Vol. I, London, 1932, pp. 236-237. Ibn Al-Athir, in : F. Gabrieli, Arab Historians of the Crusades, London, 1969, p. 13. Ibn Al-Qalanisi, The Damascus Chronicle of the Crusades, London, 1932, pp. 49-50. Ուոհայնցի, էջ 272-273: Սմբատ Սպարապետ, էջ 114-115: Անանուս Ասորի, էջ 4: Միխայլ Ասորի, էջ 406: Միայն լատին պատմագիրներն են որ կը խօսին Գաբրիէլի՝ Պոլտուինի վաստակութեան մէջ մտած ըլլալուն մասին: Իսկ ասորի պատմագիրներու՝ Միխայլ Ասորիի (քննարկ ֆրանսերէն քարգմանութիւնը) եւ Պաք Հեպարտոսի համաձայն, Գաբրիէլ դաւադրաբար Սեբաստիոյ Էմիրիմ ձեռքը ձգած է Պոհեմոնտը: Վերոյիշեալ երկու պատմագիրներուն հակահայ այս դիրքորոշումին համար տես՝ Եղիա Ս. Բասուսի, Գոռ Վասիլ, «Ակոս», 1948, քիւ 6, էջ 93: Յուլիոսի համաձայն Պոհեմոնտի բանակին սակաւաթիւ ըլլալը պատճառ կ'ըլլայ խաչակիր զինուորներուն խուճապի մատնուելով փախչելուն, որոնցմէ շատեր կը սպաննուին, իսկ Պոհեմոնտ գերի կ'իյնայ (Fulcher, p. 135):

43) 1100 թ.ի Յուլիոսի 18-ին, երբ Կատֆրի Կալիիս կը վերադառնայ Կո-

լու համար նոր հակամարտութիւններէ, Կատֆրիի մահը նախ կը պահուի դադարի, երբ իր հաւատարիմները, առաջնորդութեամբ Երուսաղէմի նախկին պատրիարքին՝ Արնուլֆի եւ Ուորնըր Կրէյլի, դեսպանութիւն մը կը զրկեն Եդեսիա, Պոլսուինի, որ դայ եւ ըստանձնէ Երուսաղէմի թաղաւորութիւնը: Պոլսուին նոր վերադարձած էր Մելիտինէէն: «Քիչ մը ատուր իր եղբոր մահուան համար, բայց ուրախ ձեռք ձդած ժառանգութեամբ», 1100 թ.ի Հոկտեմբերի 2ին, Եդեսիոյ իշխանապետութիւնը կը յանձնէ իր զարմիկին, Պոլսուին Պուրկի, «որ էր յառաջադոյն ճորտ» Պոհեմոնտի, ու հաւանաբար անոր բացակայութեան փոխարինարար կը կառավարէր Անտիոքը, եւ ինք, կրկին անգամ կողոպտելով Եդեսիան, ուրկէ կը վերցնէ ահազին ոսկի եւ արծաթ, իր ընտանիքով, 200 ձիաւոր ասպետներով եւ 700 հետեւակներով ճամբայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ: Ան Բեթլեհեմի մէջ կը թաղադրուի նոյն թուականի Դեկտեմբերի 25ին(44):

Եդեսիան յանձնուած էր ուրիշ լատինի մը: Ժառանգական

լանի դէմ կազմակերպած իր արշաւանքէն, կ'իմանայ քէ վեներտիկեան մատտորմ մը հասած է Եմֆա, ուր կը փութայ գայն դիմաւորելու, որուն աջակցութեամբ այնքան կարիք ունէր: Ճամապարհին, ան կ'ընդունի կեսարիոյ Էմիրին հերարսիբուրքիւնը: Կատֆրի, ապա կը շարունակէ մամբան դէպի Եմֆա, ուր հագիւ հասած, ժամատակնը կը հարուածէ գայն: Տասը օրեր ետք ան կը մեռնի: Սակայն շուտով շշուկներ կը տարածայնուին, որ իր արձագանքը կը գտնէ մահու պատմագրութեան մէջ, քէ կեսարիոյ Էմիրը քուստուրած է Կատֆրին (Ուտայեցի, էջ 271): Իսկ Գալամիսիի համաձայն Կատֆրի մետաքս սպանուած էր Աֆֆայի դէմ կազմակերպած յարձակումի ընթացքին (Ibn Qalanisi, p. 51), մահու տես՝ Ibn Al-Athir, in : F. Gabrieli, Arab Historians of the Crusades, p. 13:

44) William of Tyre, Vol. I, p. 422. Fulcher, pp. 136-137, 148, Ուտայեցի, էջ 274: Սմբատ Սպարապետ, էջ 115: Ամանուն Ասորի, էջ 5: S. Runciman, A. History of the Crusades, Vol. I, p. 326. Երուսաղէմի մէջ Պոլսուին աւելի ընդարձակ ասպարէզ կը գտնէ իր փառամոլութիւնները յագեցնելու, ուր ան կ'իշխէ մինչեւ 1118 թ.ը: Պոլսուինի վարած ռազմական ու քաղաքական լայնածիր գործունէութեանց առընթեր, հաս, մեզ կը հետաքրքրէ իր կնոջ՝ Արտայի անկատարութիւնը: Պոլսուին, որուն զԱդամի ժառանգորդն ու յամախ իր կիրքին գերին եղած ըլլալու իրողութիւնը չ'ուրանար Տիրաոցի, Երուսաղէմի մէջ կը լքէ իր կինը, ու կը պարտադրէ գայն որ մտնէ Ամարատ կոյսի կուսանոցը: Պոլսուինի այս արարքը կը բացատրուի անով որ Արտայի հայրը, Թորոս, մերժած էր վճարել յրամօժիտին մնացեալը, երբ, մամաւանդ Երուսաղէմի մէջ, Պոլսուին այնքան պէտք ունէր դրամի: Սակայն լատին պատմագիրները չեն մտնար առաջ էջելու այլ պատրուակ մը, ըստ որում, Արտա անբարոյական կեանք մը սկսած էր վարել,

*Իրաւունքով, Կիլիկիոյ զբացի լատին այս կոմսուքիւնը պիտի դո-  
յառուէր յաջորդ տասնամեակներուն, որուն վարած քաղաքական  
և զինուորական գործունէութիւնը սերտօրէն աւընչուած պիտի  
մնայ Հայկական Կիլիկիոյ պատմութեան հետ:*

ու քէ մինչեւ իսկ Աստիոքէն Երուսաղէմ, ծովու վրայով նաճապարհորդած ժամա-  
նակ (Պալտուին, իր բանակով ֆալած էր ցամաքէն), ան ինքզինք յամենած էր քուրք  
ծովահէններուն: Արտա կը յաջողի արտօնութիւն առնել Պալտուինէն և անցնիլ  
Կ. Պոլիս, ուր, միշտ ըստ լատին պատմիչներուն, ան առաւել ևս կը մխրճուի  
անբարոյական ընթացքին մէջ: 1113 թ.-ին, Պալտուին կ'ամուսնանայ Սիկիլիոյ  
այրիացած կոմսուհիին, Ատըլէյտի հետ, որ իր իշխանական դիրքով և հարուստ  
չքամօժիտով, ամենէն հեղինակաւոր կիներ կը նկատուէր Եւրասիայի: Ատըլէյտ  
պայման դրած էր որ Պալտուինէն գաւակ չունենալու պարագային, իր տղան՝ Սիկի-  
լիոյ կոմս Ռոնըրը, պիտի ժառանգէ Երուսաղէմի գահը: Պալտուին, Ատըլէյտի  
Էարուստ դրամօժիտին հետ միատեղ կը յուսար ձեռք բերել նորմաններու բարո-  
յակամ աջակցութիւնն ու անոնց ծովուծը: Ինչպէս իր նախորդ ամուսնութիւննե-  
րը, այս մէկն ալ Պալտուինը չի բախտաւորեր գաւակով մը: Իսկ մէկ քանի տա-  
լիներ հտք, կը սպառէր նաեւ Ատըլէյտի դրամօժիտը: 1117 թ.-ին, երբ Պալտուին  
մահացու հիւանդութեամբ մը կ'իյնայ անկողին, պատրիարք Արմուլփ, որ կրկին  
բարձրացած էր եկեղեցական այդ արքունին, և այլ բարեկամներ, գրեթէ կը պար-  
տադրեն քազարը որ քողու Ատըլէյտը, ու տուն կանչէ Արտան, որմէ պաշտօ-  
նապէս երբեք չէր ամուսնալուծուած: Պալտուին երբ կ'ապաքինի, վերջնականօրէն  
կը խզէ ամուսնական իր կապերը Ատըլէյտի հետ, որ ստիպուած կը վերադառնայ  
Սիկիլիա: Իսկ Արտա, հակառակ իրեն տրուած հրաւերին, չի վերադառնար Ե-  
րուսաղէմ (տես՝ William of Tyre, Vol. I, pp. 461-462, 513-514. Fulcher, p.  
209. S. Runciman, A History of the Crusades, Vol. II, pp. 102-105):

Արտան կրկին Երուսաղէմ հրաւիրելու փաստը ինքնին կը բացատրէ քէ հայ  
իշխանուհիին վարքին մասին հիւսուած պատմութիւնները յերկրուած էին Պալտ-  
ուինի գիտակցութեամբ և ֆազայերանքով, զայն հեռացնելու համար պալատէն:  
Յոփ նկարագրի տէր, Պալտուին գիտէր իր գայթակղութիւնները ֆոյարկել, ու  
միայն իրեն շատ մօտիկ մարդիկ տեղեակ էին անոր անձնական կեանքի գաղտ-  
նիքներուն (Besant and Palmer, Jerusalem, p. 235): Արտա գահն էր իր ընչա-  
ֆազ և հեշտաւոր ամուսնոյն: Այլապէս, դժուար է երևակայել քէ այնքան ան-  
բարոյ կին մը, այն ալ օտար, հրաւիրուէր Երուսաղէմ, վերստին գրաւելու հա-  
մար գահը:

## THE FIRST CRUSADING CAMPAIGNS IN CILICIA AND THE FOUNDING OF THE LATIN EARLDOM IN EDESSA

YERVANT H. KASSOUNY

### (Summary)

Tancred and Baldwin, separating from the main armies of the First Crusades at the Cilician Gates, march southwards. In separate battles, the first succeeds in occupying Adana, Msis, and Alexandriak; while the other takes Tarsus. Then, they hasten together to Marash, where the main crusading armies were stationed. Following the advice of Bagrat (the brother of the Armenian prince Basil the Thief of Kessoun), who accompanied him in Constantinople, Baldwin marches northward at the head of a regiment to try his luck. After occupying Ravenda and Telbashir with the military help of Armenians, Baldwin is asked to help Toros the Armenian prince of Edessa, in protecting the city against the Turks. Baldwin however, refuses to serve as a hireling. Thereupon, Toros, already advanced in age and heirless, decides to adopt him and appoint him successor to the rule after his demise. But soon Baldwin takes part in a plot against Toros and allows the rebels to kill him. On march 10, 1098, the first Latin rule is established in Edessa. Baldwin, whose wife died in Marash, marries Arda, daughter of Toros, the brother of the Roupinian prince Constantine of Cilicia. Considerably emboldened by Baldwin's successes in Edessa, a good number of Crusaders encamped around Antioch come to Edessa to join him. Confiding in the Latins found in Edessa, Baldwin disregards the native Armenians, who, suspicious of his dark designs of wresting their possessions, plot against him. But the furtive scheme is disclosed, and Baldwin plucks out the eyes of the ringleaders, banishes the lesser culprits, and confiscates their property. In 1100, Baldwin's brother Godfrey, ruler of Jerusalem, dies. Baldwin is invited to Jerusalem to succeed his brother as King of Jerusalem. He then appoints another Latin to rule over Edessa, goes promptly to Jerusalem, and is crowned there on the 25th of December, the same year.